ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/61

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով Լևոն Ալբերտի Թադևոսյանի կողմից 20.04.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. <u>Լևոն Ալբերտի Թադևոսյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Լևոն Ալբերտի Թադևոսյանը 20.04.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուն իր կարիքների համար 28.03.2018թ. հայտարարել է թռիչքավայրէջքային ուղու նորոգման աշխատանքների ձեռքբերման գնանշման հարցման ընթացակրգ: Ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 06.04.2018թ.:

Հայտեր են ներկայացրել «Սասունասար» ՍՊԸ-ն, «Խաչհար» ՍՊԸ-ն, «Դառես» ՍՊԸ-ն և «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն (կոնսորցիում «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱԳՐՈՍ» ՍՊԸ-ի հետ):

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն (կոնսորցիում «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱԳՐՈՍ» ՍՊԸ-ի հետ) հայտով ներկայացրել է 05.04.2018թ. ընդունված հասարակ գործընթերության պայմանագիր N1:

Համատեղ գործունեության պայմանագրի 2.2 կետում նշված է. Երրորդ անձանց հետ հարաբերություններում Գործընկեր 2-ի անունից գործարք կնքելու համար Գործընկեր 1-ի լիզարությունը հավաստում է Գործընկեր 2-ի կողմից նրան տրված լիազորագրով: Այսպիսով, գտնում եմ, որ Գործընկեր 1-ը իրավունք չուներ հայտը ներկայացնելու, առանց Գործընկեր 2-ի կողմից տրված լիազորագրի»:

Լևոն Ալբերտի Թադևոսյանը բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է չեղյալ համարել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար թռիչքավայրէջքային ուղու նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 06.04.2018թ. ժամը 11:30 կայացած նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումները՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն (կոնսորցիում «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱԳՐՈՍ» ՍՊԸ-ի հետ) 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասով:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր բողոքաբերը՝ Լևոն Ալբերտի Թադևոսյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 26.04.2018թ. թիվ ԴՎԱ/1421 գրությամբ Բողոքներ քննող անձին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար 23.03.2018թ. հայտարարվել է թռիչքավայրէջքային ուղու նորոգման աշխատանքների ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի շրջանակներում մասնակից «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱԳՐՈՍ» ՍՊԸ-ի հետ կոնսորցիումի պայմանագրով մասնակցել և 06.04.2018թ. գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Ըստ բողոքաբերի՝ Համատեղ գործունեության պայմանագրի 2.2 կետում նշված է. Երրորդ անձանց հետ հարաբերություններում Գործընկեր 2-ի անունից գործարք կնքելու համար Գործընկեր 1-ի լիզարությունը հավաստվում է Գործընկեր 2-ի կողմից նրան տրված

լիազորագրով, և Գործընկեր 1-ը իրավունք չուներ հայտը ներկայացնելու, առանց Գործընկեր 2-ի կողմից տրված լիազորագրի:

Վերոգրյալի վերաբերյալ տեղեկացնում եմ, որ նշված մասնակցի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են պատվիրատուի կողմից հրապարակված հրավերի պահանջներին և նշված փաստաթղթերում բողոքաբերի ներկայացրած «լիազորագրի» բացակայությունը գնահատող հանձնաժողովի կողմից դիտարկվել է ընթացակարգի տվյալ փուլում ոչ էական:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգի կասեցումը խիստ բացասական է ազդում մատակարարման բնականոն ընթացքի և զինված ուժերի վազքուղիների հարթեցման աշխատանքների վրա կարծում եմ, որ Թադևոսյան Լևոնի բողոքի առարկան էական չէ, թերի հիմնավորված և ենթակա է մերժման»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/61 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Լևոն Ալբերտի Թադևոսյանի կողմից 20.04.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 06.04.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությունը, «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի և «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱԳՐՈՍ» ՍՊԸ-ի հետ կոնսորցիումով 05.04.2018թ. կնքված Համատեղ գործունեության N1 պայմանագիրը, Պատվիրատուի կողմից 26.04.2018թ. թիվ ԴՎԱ/1421 գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ թռիչքավայրէջքային ուղու նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՇՁԲ-23/1 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև ընթացակարգ), որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովը 06.04.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 4.1 կետով որոշել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին:

Լևոն Ալբերտի Թադևոսյանը 20.04.2018թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն (կոնսորցիում «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱԳՐՈՍ» ՍՊԸ-ի հետ) հայտով ներկայացրել է 05.04.2018թ. կնքված Համատեղ գործունեության պայմանագիր N1 (այսուհետ՝ նաև պայմանագիր): Պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ երրորդ անձանց հետ հարաբերություններում Գործընկեր 2-ի անունից գործարք կնքելու համար Գործընկեր 1-ի լիզարությունը հավաստում է Գործընկեր 2-ի կողմից նրան տրված լիազորագրով, վերջինս գտնում է, որ Գործընկեր 1-ը իրավունք չուներ հայտը ներկայացնել, առանց Գործընկեր 2-ի կողմից տրված լիազորագրի:

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի (Գործընկեր-1) և «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱԳՐՈՍ» ՍՊԸ-ի (Գործընկեր-2) միջև 05.04.2018թ. կնքված ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ N1 պայմանագրի 2.2 կետի համաձայն՝ երրորդ անձանց հետ հարաբերություններում Գործընկեր 2-ի անունից գործարք կնքելու համար Գործընկեր 1-ի լիզարությունը հավաստում է Գործընկեր 2-ի կողմից նրան տրված լիազորագրով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)

- 30-րդ հոդվածի՝ 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.
- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 32-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Ընթացակարգի հրավերի՝

- 2.7 կետի համաձայն՝ մասնակիցները կարող են նույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):
- 4.3 կետի 10-րդ ենթակետի համաձայն մասնակիցը հայտով ներկայացնում է համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները նույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի (Գործընկեր-1) և «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱԳՐՈՍ» ՍՊԸ-ի (Գործընկեր-2) միջև 05.04.2018թ. կնքված Համատեղ գործունեության պայմանագրի 2.2 կետով սահմանված՝ Գործընկեր 2-ի անունից Գործընկեր 1-ի լիզարությունը հավաստող Գործընկեր 2-ի կողմից տրված լիազորագիրը նախատեսված է երրորդ անձանց հետ հարաբերություններում Գործընկեր 2-ի անունից գործարքներ կնքելու համար:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ բողոքաբերի կողմից նշված՝ Գործընկեր 2-ի կողմից տրված լիազորագրի բացակայությունը, հայտերի ներկայացման փուլում չի կարող հանդիսանալ հայտը մերժելու իրավական հիմք, քանի որ նշված լիազորագրով հավաստվում է Գործընկեր 2-ի կողմից Գործընկեր 1-ին տրված՝ նույն մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու լիզարությունը, այլ ոչ թե հայտ ներկայացնելու վերջինիս լիազորությունը: Հետևաբար, Բողոքներ քննող անձը գտնում է, որ բողոքաբերի կողմից նշված հիմնավորումն անհիմն է, և Հանձնաժողովը՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելով՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Լևոն Ալբերտի Թադևոսյանի կողմից 20.04.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ